

**ԲԱՆԿԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ
ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ**

Վահե ԲՈՅԱԽՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Բանալի բառեր. բանկային համակարգ, կայունություն, կայունության ցուցանիշ, գործակից, մշտադիտարկում

Բանկային ոլորտի կայունությունը այդ համակարգի բոլոր տարրերի և ենթակառուցվածքների զարգացման երկարաժամկետ, մշտական և հաշվեկշռված գործընթաց է, որը հանգեցնում է բանկային ոլորտի բոլոր ցուցանիշների ոչ միայն քանակական, այլ նաև որակական փոփոխությունների, ինչպես նաև նպաստավոր պայմաններ է ստեղծում հասարակության ներսում սոցիալ-տնտեսական հարաբերությունների ամբողջ համակարգի զարգացման համար: Ընդ որում, բանկային ոլորտի կայունությունը չի կարող ձեռք բերվել առանց տնտեսության իրական հատվածի և տնտեսությունում գործող այլ սուբյեկտների պահանջմունքները հաշվի առնելու: Բանկային հատվածի համար արտաքին միջավայր համարվող ընդհանուր սոցիալ-տնտեսական միջավայրի անկայունությունն ու հիմնախնդիրները իրենց ազդեցությունն են թողնում բանկային ոլորտի ներքին կայունություն վրա:

Բանկային ոլորտի կայունության կառավարումն իրականացվում է ինչպես միկրո-, այնպես էլ մակրոմակարդակում: Եթե միկրոմակարդակում այդ գործընթացի թիրախն է բանկային ոլորտում գործունեության ծավալող առանձին տնտեսավարող սուբյեկտների և այդ համակարգի առանձին ենթակառուցվածքների գործունեության կայունության և երկարաժամկետ հաշվեկշռված աճի ապահովումը, ապա մակրոմակարդակում իրականացվում է երկրի համար ընդունված դրամավարկային քաղաքականության միջոցառումների համախումբը, որի նպատակն է երկրի տնտեսական աճի ապահովման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Նշված ընդհանրական հիմնախնդրի լուծման ուղիները որոշելու համար սահմանվում են միջանկյալ (մարտավարական) նպատակներ, որոնցից են՝ արժույթի թիրախավորումը, տոկոսադրույքների թիրախավորումը, իսկ ժամանակակից տնտեսությունում նաև՝ գնաճի թիրախավորումը:

Բանկային ոլորտի կայունության ապահովման մեխանիզմներից մեկը այդ համակարգի մասնակիցների գործունեության կարգավորումն է: Բանկային ոլորտի կարգավորման մեթոդներից կարող ենք առանձնացնել՝

- ինստիտուցիոնալ՝ լիցենզավորման ճանապարհով կարգավորման մեթոդը (կամ ուղղակի սահմանափակման մեթոդը),
- նորմատիվային-իրավական կարգավորումը,
- ֆունկցիոնալ (գործառնական) կարգավորման մեթոդը,
- վարչական կարգավորումը:

Ձևակարգված և չձևակարգված շուկայական ինստիտուտների ստեղծմանը և կայացմանը զուգընթաց գերակշռող են դառնում բանկային ոլորտի նորմատիվային-իրավական կարգավորման մեթոդները: Որպես կարգավորման օժանդակ լծակ, և հաշվի առնելով կարգավորման այս ձևերի սոցիալական նշանակությունը, կիրառվում են նաև լիցենզավորման ու գործառնական կարգավորման մեթոդները: Ինչ վերաբերում է վարչական լծակների կիրառմամբ կարգավորման տարբերակներին, ապա հաշվի առնելով դրանց անհամապատասխանությունը շուկայական կարգավորման լծակներին, կարգավորման վարչական մեթոդները պետք է սահմանափակվեն և աստիճանաբար վերացվեն:

Բանկային ոլորտի կարգավորման հիմնախնդիրները քննարկելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ բանկային ծառայություններ են մատուցում նաև բազմաթիվ այլ կազմակերպություններ, որոնց գործառնությունների ծավալը հետևողականորեն աճում է: Այդ իմաստով, անհրաժեշտություն է առաջանում կարգավորման միասնական կանոններ սահմանել ոչ միայն բանկերի գործունեության նկատմամբ, այլ նաև բանկային ծառայությունների հատվածում գործունեություն ծավալող մյուս բոլոր կազմակերպությունների գործունեության նկատմամբ: Ուստի բանկային գործունեության կանոնակարգման գործընթացը պետք է դիտարկել որպես բարդ համակարգի կանոնակարգում, որը ներառում է ինչպես գործունեության բնութթով, այնպես էլ կառավարման մեխանիզմներով տարբերվող կարգավորման սուբյեկտներ և օբյեկտներ: Ինչ վերաբերում է բուն կանոնակարգման գործընթացին, ապա դրա նպատակները, սկզբունքներն ու մեթոդները պետք է միասնական լինեն:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի¹ (այսուհետ այս մասում՝ օրենք) հոդված 5-ի համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խնդիրներից է համարվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համա-

¹ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1996 թվականի հունիսի 30-ին (ՀՕ-69): Փոփոխություններով և լրացումներով ամբողջական տարբերակը տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքում՝ www.arlis.am

կարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը: Մինչդեռ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումների, վերահսկողության, ուսումնասիրությունների և լիցենզավորված անձանց պատասխանատվության ենթարկելու կարգն ու պայմանները, որոնք սահմանվել են օրենքի 5¹-րդ գլխով², չեն նախատեսում նորմատիվա-իրավական կարգավորման գործիքակազմի լայնորեն կիրառում: Օրենքի 5¹-րդ գլուխը, որը բաղկացած է 14 հոդվածից (39¹-ից 39¹⁴-րդ հոդվածներ), վերաբերում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող վերահսկողությունը և ստուգումների անցկացումը, ստուգումների պայմաններին, ՀՀ կենտրոնական բանկի և վերստուգող անձի պարտականությանը, ստուգումների ուղղություններին, ոլորտներին և ստուգման արդյունքների ամփոփմանը, խախտումների արձանագրմանը և պատասխանատվության միջոցների կիրառմանը և այլ տեսակի վարչարարության իրականացմանը:

Բանկային ոլորտի կառավարումը, մեր կարծիքով, պետք է համապատասխանի երկրի տնտեսական զարգացման ռազմավարությանը, և ինչպես բանկային ոլորտի կառավարման մեխանիզմների, այնպես էլ տնտեսական զարգացման ռազմավարության հիմքում պետք է դրված լինի տնտեսության արդիականացման և նորարարությունների ներդրման վրա հիմնված տնտեսական աճի նոր մոդելի ապահովումը:

Ելնելով վերը նշվածից՝ բանկային ոլորտի զարգացման ռազմավարական նպատակն անհրաժեշտ է ձևակերպել հետևյալ տեսքով՝ «արդյունավետ բանկային ոլորտի ստեղծում, որն ինտեգրված է համաշխարհային շուկայում կայուն մրցակցային դիրք ունեցող՝ երկրի տնտեսության արդիականացման և նորարարությունների ներդրման վրա հիմնված տնտեսական աճի նոր մոդելի ներսում»: Բանկային ոլորտի կանոնակարգումը, իր հերթին, անհրաժեշտ է իրականացնել ելնելով ռազմավարական նպատակներից:

Բանկային ոլորտի կարգավորման սկզբունքները պայմանավորված են այդ ոլորտի զարգացման ռազմավարական նպատակներով, այսինքն՝ ռազմավարական նպատակներն են կազմում այն հիմքը, որի վրա միայն կառուցվում է կառավարման համակարգը: Մինչդեռ, բանկային ոլորտի կառավարման պրակտիկան միշտ չէ որ համապատասխանում է կարգավորման սկզբունքներին: Մասնավորապես, ներկայումս չեն պահպանվում կառավարման մի շարք սկզբունքները, որոնցից են՝ հավասար իրավունքների

² Այդ գլուխն ամբողջությամբ ավելացվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում 2004 թվականի մարտի 3-ի ՀՕ-45-Ն օրենքով կատարված փոփոխություններով և լրացումներով: Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքում՝ www.arlis.am:

ապահովումը, համապարփակ կառավարումը և ֆինանսական շուկայի կարգավորման մարմինների չեզոքությունը (չմիջամտությունը) շուկայական հարաբերություններին:

Հայաստանի Հանրապետությունում ձևակարգված և չձևակարգված շուկայական ինստիտուտների ստեղծմանը և կայացմանը զուգընթաց բանկային ոլորտի պետական կարգավորումն իրականացնող մարմնի կողմից առավելապես պետք է կիրառվեն բանկային ոլորտի նորմատիվային-իրավական կարգավորման մեթոդները:

Բանկային ոլորտի մասնակիցների գործունեության կարգավորման մեթոդները պետք է հավասար պայմաններ ստեղծեն բանկային ոլորտի մասնակիցների միջև ազատ մրցակցության ձևավորման համար, թույլ չտալով առավելությունների տրամադրումը շուկայի առանձին մասնակիցներին:

Բանկային ոլորտի կայունության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը շատ հաճախ պայմանավորված է մշտադիտարկման համակարգով, որը թույլ է տալիս կանխարգելել ֆինանսական ցուցանիշների վատթարացումը սահմանված՝ ընդունելի չափերից:

Բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության ժամանակակից համակարգում առևտրային բանկերի գործունեության մշտադիտարկումը թույլ է տալիս լուծել, մասնավորապես, հետևյալ խնդիրները՝

- երկրի տնտեսական զարգացման և առևտրային բանկերի գործունեության հիմնական ցուցանիշներին վերաբերող տեղեկատվության հավաքագրումը և ամփոփումը,

- բանկային ոլորտի կայունության ցուցանիշների վերլուծությունը և կանխատեսումը, բանկային ոլորտում առկա համակարգային (համընդհանուր) ռիսկերի գնահատումը,

- առանձին բանկերի հուսալիություն, ինչպես նաև ամբողջ բանկային ոլորտի կայունության վրա առանձին գործոնների ազդեցության բացահայտումը և այդպիսի ազդեցության չափերի գնահատումը,

- բանկային ոլորտի պետական կարգավորման քաղաքականության շրջանակներում իրականացվող միջոցառումների արդյունավետության գնահատումը:

Մշտադիտարկման հիմնական ուղղությունները կարող ենք խմբավորել հետևյալ կերպ՝

- գործակիցների (ցուցիչների) մշտադիտարկում,
- բանկային ռիսկերի կարգավորիչ մշտադիտարկում,
- սթրես-թեստավորման տվյալների հիման վրա իրականացվող մըշտադիտարկում,

- բանկային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշների մշտադիտարկում,
- բանկերի խնամակալների գործունեության արդյունքներով ստացված տեղեկատվության մշտադիտարկում,
- ոչ ֆինանսական հատվածի կազմակերպությունների մշտադիտարկում:

Մշտադիտարկման վերը նշված ուղղություններից յուրաքանչյուրն ունի իր գործառնական նշանակությունը, որոնք, ինչպես վկայում է կատարված ուսումնասիրությունը, զերծ չեն թերություններից:

Նորմատիվների մշտադիտարկումը որոշակի ցուցիչների (գործակիցների) կիրառմամբ իրականացվող վերլուծությունն է, որը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007թ. փետրվարի 9-ի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» N 39-Ն որոշմամբ սահմանված կարգով և ներառում է հետևյալ տնտեսական նորմատիվները`

1. բանկի կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը (բացառությամբ` օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի),
2. բանկի կապիտալի համարժեքության նորմատիվները.
 - ա. հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը.
 - բ. ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը,
3. բանկի իրացվելիության նորմատիվները.
 - ա. բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիություն).
 - բ. բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիություն),
4. մեկ փոխառուի, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը).
 - ա. մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը.
 - բ. խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը.
5. բանկի հետ կապված մեկ անձի, բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը).
 - ա. բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը,
 - բ. բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը,

6. Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը.

ա. Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց.

բ. արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց,

7. արտարժույթի տնօրինման նորմատիվը.

ա. ըստ առանձին արտարժույթների արտարժույթային դիրք.

բ. համախառն արտարժույթային դիրք³:

Պետք է նշել, սակայն, որ տնտեսական նորմատիվների կիրառվող այս համակարգի հուսալիությունը չի կարելի գերազնահատել, քանի որ առևտրային բանկերի կողմից տրամադրվող պաշտոնական հաշվետվությունները անթերի չեն, և այդ հաշվետվությունների հիման վրա կատարված եզրակացությունների արդյունքները, հնարավոր է, որ չարտահայտեն բանկում գոյություն ունեցող իրական պատկերը: Ուստի տնտեսական նորմատիվների այդ համակարգը կարող է կիրառվել միայն բանկերի գործունեության ոլորտում առանձին մտահոգիչ ազդակների բացահայտման համար:

Համաշխարհային բանկի և արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ստեղծված համատեղ խումբը ֆինանսական ոլորտի գնահատման ծրագրի (FSAP) շրջանակում ՀՀ ֆինանսական համակարգը գնահատել է 2012թ., նշելով, որ այդ համակարգի կարգավորման և վերահսկողության իրականացման ոլորտում կան էական բարելավումներ և առաջընթաց՝ 2005թ. իրականացված գնահատման համեմատությամբ: Մասնավորապես, համաձայն վերջին գնահատման, ՀՀ ֆինանսական համակարգը մոտ 93%-ով բավարարում է Բազելյան նոր սկզբունքներին (Բազել 3-ին)՝ «համապատասխանում է ամբողջությամբ» կամ «հիմնականում համապատասխանում է» մակարդակով⁴: Միաժամանակ, «ՀՀ ԿԲ 2015-2017թթ. Ռազմավարությունը» փաստաթղթում առանձնացված են մի շարք զարգացման խնդիրներ, որոնց շարքում կարող ենք նշել ֆինանսական կայունության աստիճանի բարձրացմանը միտված հետևյալ խնդիրները՝

➤ ֆինանսական կայունության ապահովմանն ուղղված համակարգի ձևավորումը, որը կապահովի ֆինանսական կայունությունը խոցող հավա-

³ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 2007թ. փետ. 9-ի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» N 39-Ն որոշումը (գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2007թ. մայիսի 2-ին, պետական գրանցման N 05007192): Փոփոխություններով և լրացումներով տարբերակը տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքում՝ www.arlis.am

⁴ Տե՛ս «ՀՀ ԿԲ 2015-2017թթ. ռազմավարությունը», էջ 15-16, www.cba.am:

նական ռիսկերի գնահատման և ձգնաժամերի կառավարման արդյունավետ ընթացակարգերի առկայությունը,

➤ միջազգային լավագույն փորձին և սկզբունքներին համապատասխանող ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության շարունակաբար զարգացող միջավայրի ձևավորումը, որը կապահովի ֆինանսական համակարգի ռիսկերի կառավարման (կայունության ապահովման) և ֆինանսական համակարգի զարգացման լավագույն համակցությունը,

➤ ֆինանսական համակարգի զարգացման միասնական փիլիսոփայության ներքո բարեփոխումների իրականացումը, որոնք, ֆինանսական միջնորդության աճին զուգընթաց, կապահովեն տարբեր ֆինանսական հաստատությունների, ֆինանսական շուկաների և ֆինանսական ենթակառուցվածքի համաչափ ու հավասարակշիռ զարգացումը,

➤ բանկային ոլորտի կարգավորման և վերահսկողության առաջադեմ ստանդարտների ներդրումը, մասնավորապես՝ բազելյան նոր սկզբունքների, ռիսկերի վրա հիմնված՝ ապագային միտված վերահսկողության, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների համախմբված վերահսկողության ներդրումը,

➤ ֆինանսական կազմակերպությունների հաշվետվողական համակարգի օպտիմալացման և բանկերից ստացվող տվյալների որակի, ինչպես նաև վերահսկողության մոտեցումների բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացումը⁵:

Մի շարք մասնագետների կարծիքով բանկերի կողմից տրամադրվող հաշվետվությունների հավաստիության խնդիրը կարող է լուծվել գործարարության միջազգային ստանդարտների և ՖՀՄՍ (ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների) ներդրման, ինչպես նաև պարտադիր տնտեսական նորմատիվների թվի կրճատման ճանապարհով: Մինչույն ժամանակ, կենտրոնական բանկի կողմից ընդունվող նորմատիվային իրավական ակտերում, ինչպես նաև աուդիտորական ընկերությունների կողմից բանկերի հաշվետվությունների վերստուգման բնագավառում բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտություն է առաջանում:

Նշված հիմնախնդրի լուծման ճանապարհին անհրաժեշտ է խստացված պահանջներ սահմանել առևտրային բանկերի ղեկավար անձնակազմի և գլխավոր հաշվապահների նկատմամբ, ինչպես նաև հաշվառման-գործառնական և ներքին հսկողության աշխատանքների իրականացման նկատմամբ: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է հաշվարկվող ավանդական գործա-

⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2015-2017 թվականների ռազմավարությունը», էջ 16, www.cba.am:

կիցները համալրել բանկերի գործունեության ընթացքում առաջացող նոր ռիսկերի համակարգված վերլուծության համապատասխան սխեմայով: Իր հերթին, այդպիսի նոր ռիսկերի բացահայտմանը պետք է նպաստի բանկային գործունեության բոլոր ուղղությունների համապարփակ մոնիտորինգի ներդրումն ու իրականացումը, ինչը հնարավոր է ապահովել ռիսկերի կարգավորիչ մշտադիտարկման միջոցով: Այն, իր հերթին, ներառում է հետևյալ ուղղությունները՝

- կապիտալի բավարարության մշտադիտարկումը,
- վարկային ռիսկերի (ներառյալ՝ ոչ ֆինանսական հատվածի (ծեռնարկությունների) և սպառողական վարկավորման ռիսկերի) մշտադիտարկումը,
- իրացվելիության ռիսկի մշտադիտարկումը,
- շուկայական ռիսկի մշտադիտարկումը:

Ռիսկերի մշտադիտարկումն իրականացվում է ամսական կտրվածքով և նպատակ ունի բացահայտել բանկերի գործունեության անբարենպաստ միտումները՝ դրանց առաջացման ամենավաղ փուլերում (ժամանակահատվածում):

Հայաստանի բանկերի ռիսկայնության, բանկերի կապիտալի համարժեքության, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պարտադիր ցուցանիշներին բավարարելու մասին տեղեկատվությունը կարելի է ստանալ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող պարբերական հաշվետվություններից, որոնք հրապարակվում են կիսամյակային կամ տարեկան կտրվածքով:

Պետք է նկատել, որ բանկային ոլորտում առկա ռիսկերի գնահատումն իրականացվում է հիմնականում գործակիցների հաշվարկմամբ՝ բանկերի կողմից տրամադրվող պաշտոնական տեղեկատվության հիման վրա: ՀՀ ԿԲ խորհրդի 2013թ. ապրիլի 16-ի N 102-Ն որոշմամբ սահմանված կարգով բանկի ռիսկերի կառավարման համակարգն առնվազն ներառում է՝

1. ռիսկերի կառավարման ռազմավարությունը, որով սահմանվում են ռիսկերի կառավարման առումով բանկի ընդհանուր մոտեցումները / նպատակները: Ընդ որում, ռիսկերի կառավարման ռազմավարության մշակման ժամանակ առնվազն հաշվի են առնվում բանկի խորհրդի կողմից հաստատված գործարար ծրագիրն ու բանկի կողմից իրականացվող գործարար գործընթացները, ներառյալ բանկի պատվիրակված գործընթացները,
2. խորհրդի կողմից հաստատված բանկի ռիսկի ախորժակը, այսինքն՝ ռիսկերի այն մասը, որը բանկը կարող է և ցանկանում է ստանձնել՝ չխաթարելով իր ֆինանսական կայունությունը և բնականոն գործունեությունը,

3. առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները, որոնցով առնվազն սահմանվում են.

ա. բանկի գործունեությանը ներհատուկ խելամտորեն կանխատեսելի և էական ռիսկերը՝ ըստ տեսակների,

բ. ռիսկի յուրաքանչյուր տեսակի համար ռիսկի ընդունելի սահմանաչափերը, սահմանված սահմանաչափերից թույլատրելի շեղումների դեպքերն ու չափերը,

գ. ռիսկերի նվազեցմանն ուղղված մեխանիզմների կիրառումը (օրինակ՝ ապահովագրություն, հեջավորում և այլն),

4. առանձին ռիսկերի ճանաչման, գնահատման, գսպման, դրանց մոնիթորինգի և հաշվետվողականության գործընթացները և գործիքները (ներառյալ՝ մոդելները (կիրառելիության դեպքում)),

5. ռիսկերի կառավարման գործընթացում բանկի առանձին կազմակերպական միավորների, ինչպես նաև աշխատակիցների պարտականություններն ու լիազորությունները,

6. բանկի կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացների քաղաքականությունը՝ համաձայն նույն որոշմամբ սահմանված կանոնակարգի 5-րդ գլխի⁶:

Բանկի կողմից մշակված ռիսկերի գնահատման համակարգն ուղղված է առնվազն հետևյալ ռիսկերի գնահատմանը՝ վարկային ռիսկ, շուկայական ռիսկ, իրացվելիության ռիսկ, գործառնական ռիսկ, համբավի ռիսկ և ռազմավարական (բիզնես մոդելի) ռիսկ⁷:

Մինչդեռ, նշված ռիսկերից բացի, առևտրային բանկերի գործունեության վրա իրենց ազդեցությունն են ունենում գործընկեր երկրների ռիսկը, իրավական կարգավորումների ռիսկը, որոնք ընդգրկված են միջազգայնորեն ընդունված՝ բանկերին բնորոշ ռիսկերի համակարգում, սակայն դեռևս չեն հաշվարկվում ՀՀ-ում ընդունված մեթոդաբանությամբ:

Բանկային ռիսկերի մշտադիտարկման համակարգի զարգացման (ընդլայնման), այդ համակարգի բարելավման, ինչպես նաև կառավարման համար կարևորագույն նշանակություն կարող է ունենալ այն տեղեկատվություն

⁶ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2013թ.-ի ապրիլի 16-ի «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի N 71-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 102-Ն որոշումը (գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2013 թվականի մայիսի 29-ին, պետական գրանցման N 05013209):

Փոփոխություններով և լրացումներով տարբերակը տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքում՝ www.arlis.am:

⁷ Նույն տեղում, կետ 27:

նը, որը հավաքագրվում է վարկային տեղեկատվության միասնական համակարգում (վարկային պատմությունների բյուրոյում): Այդպիսի բյուրոների ստեղծման միջազգային փորձը վկայում է, որ հենց վարկային պատմությունների բյուրոն է բանկերին ապահովում հավանական վարկառուների մասին հավաստի տեղեկատվությամբ, ինչը թույլ է տալիս հստակորեն կանխատեսել վարկերի վերադարձելիությունը: Այս հանգամանքն, իր հերթին, նվազեցնում է վարկային ռիսկը հենց սկզբնական փուլում՝ վարկ տրամադրելու վերաբերյալ որոշումներ ընդունելու ժամանակ: Մյուս կողմից, վարկային պատմությունների բյուրոյում հաճախորդի մասին համապարփակ տեղեկատվության առկայությունը նվազեցնում է այդպիսի տեղեկատվությունը փնտրելու հետ կապված ծախսերը: Սա նպաստում է վարկային շուկայի ներսում տեղեկատվական դաշտի համահարթեցմանը, փոքրացնում է տեղեկատվության անհամաչափությունը, իսկ վարկատուներին ստիպում է իր վարկային ռեսուրսների նկատմամբ մրցակցային գներ սահմանել: Եվ վերջապես, վարկային պատմությունների բյուրոյի գործունեությունը ներազդում է վարկառուների կարգապահության բարձրացման վրա, քանի որ իրական վտանգ գոյություն ունի, որ վարկային վատ պատմությունը թույլ չի տա միջոցներ ստանալ հավանական վարկատուներից:

Մեր կարծիքով, և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության փոքր չափերը, նպատակահարմար է ստեղծել կենտրոնացված տեղեկատվական համակարգ, որը կներառի հետևյալ տեղեկատվությունը՝

- իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վարկային ռիսկերի (ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների),
- ֆիզիկական անձանց վարկային ռիսկերի,
- խնդրահարույց պարտքերի (ներառյալ՝ վարկերը ժամկետների խախտումներով մարելու) մասին,
- տարբեր ֆինանսական գործիքների գծով (պարտատոմսերի, մուրհակների և այլն) չմարված պարտավորությունների մասին,
- տնտեսավարող սուբյեկտների վարկանիշները, ինչպես նաև սեփականատերերի ու ղեկավարների ցուցանիշների համակարգերը:

Վահե ԲՈՅԱԽՉՅԱՆ

Բանկային ոլորտի կայունության ապահովման առանձին մեթոդներն ու ձևերը

Բանալի բառեր. բանկային համակարգ, կայունություն, կայունության ցուցանիշ, գործակից, մշտադիտարկում

Բանկային համակարգի կայունությունը պայմանավորված է այդ համակարգի բոլոր տարրերի և ենթակառուցվածքների զարգացվածությամբ և հաշվեկշռված աշխատանքով: Բանկային համակարգի կայունության կառավարումը մակրոմակարդակում թույլ է տալիս նպաստավոր պայմաններ ստեղծել երկրի տնտեսական աճի ապահովման համար, մինչդեռ միկրոմակարդակում կարգավորման առարկա են հանդիսանում բանկային ոլորտում գործունեություն ծավալող առանձին տնտեսավարող սուբյեկտներն ու ենթակառուցվածքները, իսկ կարգավորման հիմնական նպատակն է՝ այդ ենթակառուցվածքների գործունեության կայունության և երկարաժամկետ հաշվեկշռված աճի ապահովումը:

Ваге БОЯХЧЯН

Некоторые методы и формы обеспечения стабильности банковского сектора

Ключевые слова: банковский сектор, стабильность, показатель стабильности, коэффициент, мониторинг

Стабильность банковского сектора достигается в результате развития и сбалансированной деятельности всех элементов и инфраструктур этого сектора. Обеспечение стабильности банковского сектора на макроэкономическом уровне позволяет говорить о создании благоприятных условий для экономического роста страны. На микроэкономическом уровне объектами управления являются отдельные хозяйствующие субъекты, действующие на рынке банковских услуг, а также отдельные банковские инфраструктуры, а основной целью управления на микроуровне является обеспечение стабильности деятельности данных структур и их сбалансированного развития в долгосрочной перспективе.

Vahe BOYAKHCHYAN

Some methods and forms of providing stability of banking sector

Key words: banking sector, stability, stability index, coefficient, monitoring

The stability of the banking sector is achieved as a result of the development and balanced activities of all elements and infrastructures of this sector. Ensuring the stability of the banking sector at the macroeconomic level allows us to talk about creating favorable conditions for the economic growth of the country. At the microeconomic level, the management objects are separate economic entities operating in the banking services market, as well as certain banking infrastructures, and the main goal of micro-level management is to ensure the stability of these structures and their balanced development in the long term period.